ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 8-Ա

22 դեկտեմբերի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ալավերդյան Նաիրի

Արսենյան Արսեն

Գևորգյան Սուրեն

Հովսեփյան Կամսար

Ղզրոյան Գևորգ

Ղազարյան Մաուլեն

Մելիքյան Բաբիկ

Նաջարյան Արմենակ

Նիկոյան Արմեն

Շաբոյան Գևորգ

Ուռումյան Արթուր

Սահակյան Վահրամ

Սաղաթելյան Ագուն

Սարգսյան Զավեն

Վարոսյան Արսեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

«22» դեկտեմբերի 2017 թվական

քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի
ավագանու 2017 թվականի
դեկտեմբերի 22-ի թիվ 8-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

2. . Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ սահմանելու մասին

   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայության հիմնարկներում և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում 2018 թվականի ծնողների կամ նրանց ներկայացուցիչների վճարումների չափը սահմանել

   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և տարածքների վարձակալական վճարի չափ սահմանելու մասին:

   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Անի տարածքային բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Անի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 7-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2018 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

9. Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

10. Բյուջեի հոդվածների փոփոխություն

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 9-Ն

22 դեկտեմբերի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և 38-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ , 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -4

Արսենյան Արսեն

Հովսեփյան Կամսար

Ղզրոյան Գևորգ

Ղազարյան Մաուլեն

Մելիքյան Բաբիկ

Ալավերդյան Նաիրի

Գևորգյան Սուրեն

Սաղաթելյան Ագուն

Վարոսյան Արսեն

Նաջարյան Արմենակ

Նիկոյան Արմեն

Շաբոյան Գևորգ

Ուռումյան Արթուր

Սահակյան Վահրամ

Սարգսյան Զավեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

«22» դեկտեմբերի 2017 թվական

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 9-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

1) Հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար **4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ:**

2) սույն կետի «1-ին» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **9000 (ինը հազար) դրամ,**

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **15000 (տասնհինգ հազար) դրամ,**

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **15000 (տասնհինգ հազար) դրամ,**

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **30 000 (երեսուն հազար) դրամ**:

3) Ոչ հիմնական օբյեկտների համար

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար **900 (ինը հարյուր) դրամ,**

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպարունակող շենքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն **900 (ինը հարյուր) դրամ,**

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերանորոգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1-ին» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն որոշման իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է **1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ**:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000(տաս հազար դրամ),

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի վաճառքի կազմակերպման դեպքում 13000 (տասերեք հազար դրամ),

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20000(քսան հազար դրամ),
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25000 (քսանհինգ հազար դրամ),
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45000(քառասունհինգ հազար դրամ),
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 100000(մեկ հարյուր հազար դրամ),

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000(տաս հազար դրամ)
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13000 (տաս հազար դրամ)
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20000 (քսան հազար դրամ)
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25000 (քսանհինգ հազար դրամ)
ե. 201-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի վաճառքի կազմակերպման դեպքում 45000(քառասուն հինգ հազար դրամ)
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 100000(հարյուր հազար դրամ)

5. Համայնքի տարածքում
1) բացօթյա վաճառք կազմակերպելու համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 (երեք հարյուր հիսուն) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար,
2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկի վաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **200000 (երկու հարյուր հազար) դրամ,**
3) Խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000(երեսուն հազար դրամ)
6. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է `
1) Հիմնական շինությունների ներսում
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000(հինգ հազար դրամ)
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 (տաս հազար դրամ)
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000(տասնհինգ հազար դրամ)
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 (քսան հազար դրամ)
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000(երեսուն հազար դրամ)
զ. 501 և ավելի քառակուսի մետր ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 (հիսուն հազար դրամ)
2) Ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 (մեկ հազար դրամ)
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 (երկու հազար դրամ)
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000(չորս հազար դրամ)
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 (ութ հազար դրամ)

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000 (տասնհինգ հազար դրամ)

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25000 (քսանհինգ հազար դրամ)

7. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճալիքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   1) առևտրի օբյեկտների համար **25000 (քսանհինգ հազար) դրամ**,
   2) հանրային սննդի և զվարճալիքների օբյեկտների համար **50000 (հիսուն հազար)դրամ**,
   3) բաղնիքների (սաունաների) համար **200000 (երկու հարյուր հազար) դրամ**,
   4) խաղատների կազմակերպման համար **500000 (հինգ հարյուր հազար)դրամ**,
   5) շահումով խաղերի կազմակերպման համար **250000 (երկու հարյուր հիսուն հազար)դրամ**,
   6) վիճակախաղերի կազմակերպման համար **100000 (մեկ հարյուր հազար)դրամ**:

8. Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **0 (զրո)** դրամ:

9. Համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար սահմանվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝
   1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար 200 (երկու հարյուր)դրամ,
   2) յուրաքանչյուր մեկ օրվա համար **1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ**,
   3) մեկ շաբաթվա համար **4000 (չորս հազար)դրամ**,
   4) մեկ ամսվա համար **20000 (քսան հազար) դրամ**,
   5) մեկ տարվա համար **80000 (ութսուն հազար) դրամ**,

10. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է **50000 (հիսուն հազար) դրամ**:

11. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է
   1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար **2000 (երկու հազար) դրամ**,
   2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար **3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ**,
   3) այլ արտաքին գովազդի համար **1500 (մեկ հազար** հինգ հարյուր) **դրամ**,
   4) համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների համար **375 (երեք հարյուր** յոթանասուն հինգ) **դրամ** մեկ քառակուսի մետրի դիմաց:
   5) կազմակերպության կողմից իր գովազդը տեղաբաշխելու և տարածելու համար գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց յուրաքանչյուր ամսվա համար սահմանվում է տեղական տուրք 150 (մեկ հարյուր հիսուն) դրամ
   6) սոցիալական գովազդի համար 0 (զրո) դրամ

12. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և քաղվածքների կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **10000 (տաս հազար) դրամ**:

13. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է **10000 (տաս հազար) դրամ:**

14. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **0 (զրո)** դրամ:

15. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝
   1) 3 հեկտարից մինչև 5 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)** Հայաստանի Հանրապետության **դրամ**:
   2) 5 հեկտարից մինչև 7 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար **5000000 (հինգ միլիոն)** Հայաստանի Հանրապետության **դրամ**:

3) 7 հեկտարից մինչ 10 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **7000000 (յոթ միլիոն)** Հայաստանի Հանրապետության **դրամ**:

4) 10 հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **10000000 (տաս միլիոն)** Հայաստանի Հանրապետության **դրամ:**

16. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **50000 (հիսուն հազար) դրամ**:

17. Համայնքի տարածքում տեղական վճարները սահմանվում են հետևյալ դրույքաչափերով՝

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **10000 (տաս հազար) դրամ**,

2. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **5000 (հինգ հազար) դրամ**:

3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար **10000 (տաս հազար) դրամ**:

4. աղբահանությունը կազմակերպելու համար ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար սահմանվում է աղբահանության վճար ամսական **100 (մեկ հարյուր) դրամ**,

5. ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման համար ամսական **1000 (մեկ հազար)** դրամ աղբահանության վճար սահմանվում է առևտրի օբյեկտների հիմնական շինությունների համար:

6. ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման համար ամսական **500 (հինգ հարյուր) դրամ** աղբահանության վճար սահմանվում է առևտրի օբյեկտների ոչ հիմնական շինությունների համար:

7. առանձին տարածք ունեցող կազմակերպությունների համար սահմանվում է ամսական **4000 (չորս հազար) դրամ** աղբահանության վճար, իսկ պարսպապատված առանձին տարածք ունեցող կազմակերպությունների համար սահմանվում է **8000 (ութ հազար) դրամ** աղբահանության վճար.

8. համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբին ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար սահմանվում է ամսեկան 2000 դրամ **(երկու հազար).**

9. համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում վարձակալությամբ տարածք զբաղեցնող կազմակերպությունների համար սահմանվում է ամսական **2000 (երկու հազար) դրամ** աղբահանության վճար.

10. համայնքի տարածքում տոնավաճառների /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **5000 (հինգ հազար).**

11. համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար **100 (մեկ հարյուր) դրամ**.

12. համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավազանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայրի կահավորված տարածքումընտանեական կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝**1000 (մեկ հազար)** դրամ.

13. կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 0(զրո) դրամ, բացառությամբ <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

14. ջրմուղ-կոյուղու համար այն բնակավայրերում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում,

մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով 0(զրո) դրամ, բացակայությամբ <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

15. ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն <<Ջրօգտագործողների ենթակառույցների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 0(զրո) դրամ, բացառությամբ <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

16. համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 500 (հինգ հարյուր) դրամ.

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10-Ն

22 դեկտեմբերի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19 կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներում և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում 2018 թվականի ծնողների կամ նրանց ներկայացուցիչների վճարումների չափը սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -2

Ալավերդյան Նաիրի

Նաջարյան Արմենակ

Արսենյան Արսեն

Շաբոյան Գևորգ

Գևորգյան Սուրեն

Հովսեփյան Կամսար

Ղզրոյան Գևորգ

Ղազարյան Մաուլեն

Մելիքյան Բաբիկ

Նիկոյան Արմեն

Ուռումյան Արթուր

Սահակյան Վահրամ

Սաղաթելյան Ագուն

Սարգսյան Զավեն

Վարոսյան Արսեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

«22» դեկտեմբերի 2017 թվական

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 10-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների վարձը սահմանել ամսեկան 5000 դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների վարձը սահմանել ամսեկան 5000 դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների վարձը սահմանել ամսեկան 4000 դրամ:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի աշակերտների ուսման վարձը՝ ամսեկան 3000 դրամ:
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի արվեստի դպրոց.

Հ/Հ	Անվանումը	Վարձավճարի չափ /դրամ/
1	Կերպարվեստի	1000
2	Ասեղնագործության և ֆուրշետի	1000
3	Պարարվեստ	1000
4	Ազգագրական երգ	500
5	Դեկորատիվ կարատեսակ	1000
6	Դիզայն գորգագործություն	1000
7	Ասմունք	500

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Մշակութային երիտասարդական կենտրոն>>.

Հ/Հ	Անվանումը	Վարձավճարի չափ (դրամ)
1	Տիկնիկային թատրոն	1000
2	Ազգային պարեր	1000
3	Կերպարվեստ	500
4	Վոկալ ազգագրական երգչախումբ	500
6	Ասմունք	500

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի մանկապատանեկան մարզադպրոց.

Հ/Հ	Անվանումը	Վարձավճարի չափ (դրամ)
1	կարատե	1000
2	ֆուտբոլ	1000
3	Սպորտային պարեր, գիմնաստիկա	500
4	Վոլեյբոլ-բասկետբոլ	500
5	Ձյուդո	500

Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 11-Ն

22 դեկտեմբերի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և տարածքների վարձակալական վճարի չափ սահմանել յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար ամսեկան 400 դրամ:
2. Ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -1

Ալավերդյան Նաիրի

Սաղաթելյան Ագուն

Արսենյան Արսեն

Գևորգյան Սուրեն

Հովսեփյան Կամսար

Ղզրոյան Գևորգ

Ղազարյան Մառլեն

Մելիքյան Բաբիկ

Նաջարյան Արմենակ

Նիկոյան Արմեն

Շաբոյան Գևորգ

Ուռումյան Արթուր

Սահակյան Վահրամ

Սարգսյան Զավեն

Վարոսյան Արսեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

«22» դեկտեմբերի 2017 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 12-Ն

22 դեկտեմբերի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի Անի տարածքային բաժնի գրանցման կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ալավերդյան Նաիրի

Արսենյան Արսեն

Գևորգյան Սուրեն

Հովսեփյան Կամսար

Ղզրոյան Գևորգ

Ղազարյան Մառլեն

Մելիքյան Բաբիկ

Նաջարյան Արմենակ

Նիկոյան Արմեն

Շաբոյան Գևորգ

Ուռումյան Արթուր

Սահակյան Վահրամ

Սաղաթելյան Ագուն

Սարգսյան Զավեն

Վարոսյան Արսեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

«22» դեկտեմբերի 2017 թվական

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 12 -Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ

2017 ԹՎԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը, աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է (այսուհետ՝ բաժին), որը <<Քաղաքացիական կացության ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթներ:
2. Բաժինը ստեղծվում , վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով՝ համայնքի ավագանու որոշմամբ: Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն:
3. Բաժնի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով , Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:
4. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Բաժինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.

2) տարածքային բաժնի արխիվի վարումը.

3) կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը.

4) օրենքով նախատեսված այլ նպատակներ և խնդիրներ:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժինն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի հետևյալ պետական գրանցումները՝

ա. ամուսնությունը.

բ. ամուսնալուծությունը.

գ. ծնունդը

դ. որդեգրումը.
ե. հայրություն որոշելը.
զ. անվան փոխումը.
է. մահը.
2) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ.
3) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումը.
4) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժնի գործունեությունը կազմակերպում է Անի համայնքի ղեկավարը:
9. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:
10. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրառումները կազմելու որակի համար պատասխանատու է բաժնի պետը և գրանցում կատարող աշխատողը:
11. Բաժնի պետը՝

1) իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով , համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով.
2) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ կատարումը.
3) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
4) կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
5) բաժնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.
6) իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.
7) ուսումնասիրում է բաժնի աշխատողների գործունեության դեմ ուղղված բողոքները.
8) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.
9) ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.
10) իրականացնում է հսկողություն տարածքային բաժնի ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, պաշտոնական պարտականությունների ժամանակին և օրենքի պահանջներին համապատասխան կատարման նկատմամբ.
11) վարում է համապատասխան տարածքային բաժնի արխիվը.
12) օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրում է տեղեկատվություն կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ.
13) աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում բաժնի համայնքային ծառայողների նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժերի միջոցներ կիրառելու մասին առաջարկություններ.

14) համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություն բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.
15) պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.
16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

12. Բաժնի աշխատողը՝
1) բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ, վկայականների, տեղեկանքների, ակտային պատճենների և այլ փաստաթղթերի տրամադրման գործավարություն.
2) իր լիազորությունների շրջանակներում վարում է բաժնի արխիվը.
3) կատարում է բաժնի պետի ցուցումները և հանձնարարականները.
4) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.
6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
7) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները.
8) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
9) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
10) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

Անի համայնքի ղեկավար Ա.Գևորգյան